ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

Ա Շ Խ Ա Տ Ա Կ Ա Ր Գ Ա Յ Ի Ն Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«ՀՀ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ «ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ 52-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 2-ՐԴ ՄԱՍԻ՝ ՍԱՀՄԱՆԱ-ԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ԳՈՐԾԻ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՍԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Սահմանադրական դատարանը, քննության առնելով «ՀՀ Վճռաբեկ դատարանի դիմումի հիման վրա՝ «Ոստիկանությունում ծառայության մասին» օրենքի 52-րդ հոդվածի 2-րդ մասի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի վարույթը կասեցնելու մասին առաջարկությունը, **Պ Ա Ր Զ Ե Ց.**

1. Սույն գործով դիմումը Սահմանադրական դատարան է մուտքագրվել 2024 թվականի փետրվարի 15-ին: Սահմանադրական դատարանի՝ 2024 թվականի մարտի 15-ի ՍԴԱՈ-45 աշխատակարգային որոշմամբ գործն ընդունվել է քննության, գործով զեկուցող է նշանակվել Սահմանադրական դատարանի դատավոր Հ. Թովմասյանը, և դատաքննությունը նշանակվել է 2024 թվականի մայիսի 7-ին: 2024 թվականի մայիսի 14-ի ՍԴԱՈ-79 աշխատակարգային որոշմամբ նշված գործի քննության ժամկետը՝ երկարաձգվել, և դատաքննությունը նշանակվել է 2024 թվականի հունիսի 11-ին: 2024 թվականի մայիսի 31-ի ՍԴԱՈ-91 աշխատակարգային որոշմամբ նշված գործի դատաքննությունը հետաձգվել է, և գործի դատաքննությունը նշանակվել՝ 2024 թվականի հուլիսի 2-ին:

Սահմանադրական դատարանը 2024 թվականի հուլիսի 2-ի ՍԴԱՈ-102 աշխատակարգային որոշմամբ գործով զեկուցող՝ Սահմանադրական դատարանի դատավոր Հ. Թովմասյանին փոխարինել և գործով զեկուցող է նշանակել Սահմանադրական դատարանի դատավոր Է. Շաթիրյանին:

Սահմանադրական դատարանը 2024 թվականի հուլիսի 2-ի ՍԴԱՈ-103 աշխատակարգային որոշմամբ, հիմք ընդունելով «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 57-րդ հոդվածի 1-ին մասը, սույն գործի վարույթը վերսկսել է:

2. Հաշվի առնելով, որ առկա է «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 56-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով նախատեսված՝ գործի վարույթը կասեցնելու հիմք, մասնավորապես՝ անհրաժեշտություն է առաջացել տեղեկություններ ստանալ և լրացուցիչ ուսումնասիրություններ կատարել, Սահմանադրական դատարանը գտնում է, որ սույն գործի վարույթը ենթակա է կասեցման:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 56-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետը՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց.**

«ՀՀ Վճռաբեկ դատարանի դիմումի հիման վրա՝ «Ոստիկանությունում ծառայության մասին» օրենքի 52-րդ հոդվածի 2-րդ մասի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի վարույթը կասեցնել՝ մինչև կասեցման հիմքը վերանալը:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ **Ա. ԴԻԼԱՆՅԱՆ**

3 հուլիսի 2024 թվականի
ՍԴԱՈ-109